ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԵԼՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Բազմադարյան պատմություն ունի արեւելահայ հատվածի՝ պատմական Արցախի ժողովրդի մշակույթը: Սկիզբ առնելով խոր անցյալում, այն անցել է երկար ու բեղուն, համառ պայքարի ճանապարհ՝ հարուստ մարդկային մտքի ու ձեռքի ստեղծագործ աշխատանքի, ազատատենչ ոգու փայլատակումներով: Պատմական տարբեր ժամանակներում այն կրել է բազմաթիվ ազդեցություններ, հարստացել է, հարստացրել հարեւան ժողովուրդների մշակույթը, բայց մնացել է միշտ խորապես ազգային, ինքնատիպ:

Ազգային կրոնի հետ միասին այն դարեր շարունակ ծառայել է հայ էթնոսի պահպանման եւ շրջակա, հաճախ ավելի հզոր, էթնիկական հանրություններից նրա պաշտպանության գերխնդրին: Աստիճանաբար ձեւավորվել է հայ ժողովրդի այդ հատվածի մշակութային ավանդույթը, որը թույլ է տվել բյուրեղացնել այդ մշակույթին առավել բնորոշ գծերը եւ դրանք հաղորդել հաջորդ սերունդներին: Արցախահայ մշակույթը հանդես է եկել ոչ թե որպես իր մեջ ներառած բաղադրիչների պարզ հանրագումար, այլ բարդ ու ճկուն մի համակարգ, որում ճշգրտորեն ըմբռնվել են դարաշրջանի խնդիրները եւ բավարարվել ժամանակի եւ միջավայրի պահանջմունքները:

Չնայած դարեր ի վեր իրար հաջորդող ծանր քաղաքական պայմաններին, Արցախի ժողովուրդն իր գոյության ամենաօրհասական պահին անգամ չի կորցրել հոգու արիությունը եւ մտքի սլացքը, մշակութային կյանքի ամենաբազմազան դրսեւորումներում արտահայտել է իր ձգտումները եւ պատմաքաղաքական խառնակ ու ծանր պայմաններում մաքառումներով շարունակել է հարատեւել, պահպանել մշակութային կյանքի անհամաչափ առաջընթացը եւ մոտեցել իր պատմության նոր դարին՝ հասարակական-քաղաքական հեղաշրջումներով փոթորկվող, լուսավորության ու ազատության գաղափարներով շնչող 19-րդ դարին:

Պատմական նոր ժամանակներում Ռուսաստանին միանալուց հետո արեւելահայ հատվածում քաղաքական, ազգային ու հասարակական կյանքում ծավալվող տեղաշարժերն իրենց ազդեցությունն էին թողնում մշակույթի զարգացման ու նրա ուղղությունների վրա, պայմանավորում հոգեւոր-մտավոր աշխուժացումն ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա անբաժան հատվա-

ծում՝ պատմական Արցախում: Հայ մտավորականության կարող ուժերը, քաղաքական-հասարակական շրջանները բացառիկ նշանակություն էին տալիս ժողովրդի լուսավորությանը եւ գրագիտության տարածմանը՝ ձգտելով քաղաքական ինքնագիտակցություն եւ ազատագրական մղումներ ներարկել արցախահայությանը: Դարասկզբին Արցախի հոգևոր-մշակութային կյանքում տեղի ունեցած շրջադարձերը վճռորոշ դեր խաղացին նրա հետագա առաջընթացի վրա:

Քննարկվող ժամանակաշրջանում՝ 19-րդ դարի երկրորդ կեսին, Արցախի տնտեսական-քաղաքական-մշակութային կյանքում տեղ գտած շրջադարձը եւ առաջավոր մտքի վերելքը զգալիորեն կապված եւ պայմանավորված էր արեւելահայ հատվածում, ինչպես նաեւ Ռուսաստանում, Անդրկովկասում իրագործվող արմատական փոփոխությունների հետ, որոնք ուղղակի ազդեցություն էին թողնում նաեւ հայ հասարակական-քաղաքական շարժումների վրա: Սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշ առաջընթացը շոշափում էր նաեւ հոգեւոր կյանքի ոլորտը, նոր խնդիրներ ու պահանջներ են առաջադրվում նաեւ մշակույթի տարբեր բնագավառների ասպարեզում:

Դարաշրջանի Արցախի մշակույթի բնութագրական հատկանիշներից էր դպրոցների, տպարանների, պարբերականների բացումը եւ գործունեությունը, գիտության, գրականության, թատերական արվեստի, երաժշտության, կերպարվեստի եւ այլ ճյուղերի վերելքն Արցախի ամենատարբեր մասերում՝ նրա մշակութային կենտրոններում, Ամարասում, Դադի, Գտչա, Գանձասարի վանքերում եւ հատկապես խոշոր կենտրոն Շուշիում: Իհարկե, դա տեղի էր ունենում բավականաչափ այլազան մշակութային մթնոլորտի պայմաններում: Հետեւաբար՝ նոր ժամանակի Արցախի մշակույթը սնվում էր իր պատմական եւ այլ ակունքներից, փոխազդեցության մեջ մտնում զանազան էթնիկ մշակույթների եւ մշակութային ավանդույթների հետ: Եվ պետք է ասել, որ արցախահայ մշակույթն աստիճանաբար խզում է դարավոր կապերը հարեւանների ավանդույթների հետ, որոնք թշնամաբար ու միտումնավոր քաղաքականություն են դրսեւորում եւ ուժեղացնող առնչություններ հաստատում ռուսական մշակույթի, հասարակական-քաղաքական առաջադիմական մտքի հետ: Ինչ խոսք, որ զգալի չափով ռուսական միջնորդավորմամբ են հայ իրականություն ներթափանցում արեւմտաեվրոպական մշակութային արժեքները, եւ անմիջական շփումներ են սկզբնավորվում ռուսական միջավայրի հետ: Նման պատմական պայմաններում պահանջվում էր անդուլ գործունեություն եւ ջանքեր՝ արցախահայ մշակույթի առաջընթացը ճիշտ ուղիով տանելու համար, որն, իհարկե, դարասկզբին սկիզբ առած մշակույթի զարգացման միտումն էր:

19-րդ դարի 2-րդ կեսին Արցախի մշակութային կյանքի վերելքը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Առաջին, դարաշրջանի կարեւոր իրադարձություններն իրենց ազդեցությունն էին թողնում մշակույթի զարգացման ու նրա ուղղությունների վրա: Երկրորդ, Արցախի մշակութային

վերընթացը սերտորեն կապված էր Արեւելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում առաջացած նոր փոփոխությունների հետ: Երրորդ, արցախահայ երիտասարդությունը Ռուսաստանում, Եվրոպայում իր ուսումնառության ընթացքում ոչ միայն յուրացնում էր այդ երկրների մշակույթը, այլեւ նրանից առանձնացնում էր արժեքավորը, որը կարող էր առաջ մղել բազմադարյան Արցախի մշակույթը: Այս առումով էլ Արցախի մշակույթը ոչ թե ընդօրինակողի կամ ազդեցություն արտահայտողի դեր ստանձնեց, այլ հենվելով իր մշակութային հարուստ ժառանգության արմատների վրա, կռահելով ռուսական, եվրոպական, ինչպես նաեւ հարեւան երկրների մշակույթի զարգացման ուղղությունները, առավել հարստացրեց հայրենի մշակույթը, որը ոչ միայն մրցունակ դարձավ, այլեւ ներկայացրեց արտահայտամիջոցների իր անկրկնելի դրսեւորումները, որոնք հիմնականում ծնունդ էին առնում ազգային կյանքից, մտածողությունից, ազատագրական շարժումներից, տնտեսական կացությունից, հասարակական հարաբերություններից: Եվ, չորրորդ, դիտարկվող ժամանակաշրջանում՝ 50-60-ական թթ. սկսած Արցախի խոշոր մշակութային կենտրոն Շուշիում, թեմի լուսավորության օջախներում բեղմնավոր գործունեություն են ծավալում հայ մշակույթի ականավոր գործիչները, որոնք իրենց հարուստ փորձով ու ձեռնարկումներով թարմություն մտցրին հայ ժողովրդի այդ հատվածի մշակութային կյանքում:

Դարաշրջանի Արցախի մշակույթի գլխավոր օջախներից մեկը դպրոցն էր: Հայտնի է, որ Մեծն Մաշտոցի հանճարով ստեղծած հայ գրերի գյուտից հետո հայեցի կրթություն տվող դպրոցներ են բացվում Հայոց արեւելից կողմանց գավառներում՝ Ամարասում, Մեծարանք, Մեծկվենք, Մեծ Կողմանք գավառներում, Ուտիքի Գարդմանում եւ այլ վայրերում: Գրիգոր Լուսավորիչն ու Մեսրոպ Մաշտոցն իրենց գործունեության լուսավոր շրջայի մեջ են առել Ամարասը, որը դարձել է համայն Արցախի կրթատունն ու հոգեւոր նշանչարան: Ամարասը համարվում էր ոչ միայն Արցախի հոգեւոր (եպիսկոպոսանիստ), այլեւ խոշոր մշակութային ու տնտեսական կարեւոր կենտրոն:

Տարբեր ժամանակներում այստեղ ծաղկել են թարգմանչական արվեստը, մատենագրությունը, լուսավորությունն ու գիտությունը:

Հետագա ժամանակներում հայոց արցախական աշխարհում դպրոցական կյանքում զգալի տեղաշարժեր են կատարվում Արցախ-Ուտիքյան հայաշխարհի փոքրիկ թագավորության հիմնադիր Վաչագան Բարեպաշտի ժամանակաշրջանում:

Անուրանալի է Բարեպաշտի ձեռնարկումները Հայոց Արեւելից Կողմանց գավառներում, հատկապես դպրոցաշինության ասպարեզում:

6-7-րդ դարերում, չնայած ճգնաժամային շրջանի, արցախական հայաշխարհում շարունակվում է Վաչագան Բարեպաշտի լուսավորական ձեռնարկումները՝ հոգեւոր մշակութային կյանքի վերափոխումների ոլորտներում:

Բ. Ուլուբաբյանը «Խաչենի իշխանությունը 10-15-րդ դարերում» աշխատության մեջ վկայում է այն փաստը, որ երկրամասի ներքին կյանքում իշխան Զիվանշիրը (գահակալել է 637-683թթ.) անշեղորեն հետեւում է Վաչագան Բարեպաշտի օրինակին, ամրապնդում տնտեսական իրավական կարգը, կիրառում հայոց լուսավորչական հավատի սկզբունքները. Արցախի վանքերի եկեղեցիներին կից բացում դպրոցներ, որտեղ սովորում են բազմաթիվ հայ պատանիներ:

8-9-րդ դարերում պատմական անբարենպաստ իրադրությունների պայմաններում շարունակում են պահպանել իրենց գոյությունը Ամարասի, Դադի, ս. Հակոբի, Գտիչ վանքերում գործող կրթօջախները: Ազգային մշակույթի, դպրոցի պահպանման ու բարգավաճման ոգին բարձր էր Արցախի ժողովրդի մոտ, որն ամենաօրհասական պահին անգամ չի կորցրել հոգու արիությունը եւ մտքի սլացքը:

Արցախական աշխարհում դպրոցական գործը լայն թափ ստացավ հատկապես 10-12-րդ դարերում՝ հայկական վերածնդի դարաշրջանում: Վերածնունդն իր բարերար ազդեցությունն է թողնում նաեւ դպրոցի վրա: Սկսվում է ուսումնական հաստատությունների աստիճանական աշխարհականացում, որոշակի մերձեցում կյանքին, ուժեղանում է հետաքրքրությունը դեպի բնական ու մաթեմատիկական գիտությունները, լեզուների ուսումնասիրությունը:

Հավաստի աղբյուրների համաձայն, 13-րդ դարում մշակութային, շինարարական, լուսավորական գործը վերելք է ունենում Հասան Զալալյանի (Վախթանգ Տանգիկի ավագ որդին) իշխանության ժամանակաշրջանում: Գանձասարը դարձավ արցախական աշխարհի ազատագրական շարժումների, հոգեւոր մշակութային, լուսավորության խոշոր կենտրոն: Հայտնի էր իր դպրատներով, կրթօջախներով, հարուստ մատենադարանով, որի ձեռագրերից շատերն այսօր պահպանվում են ՀՀ Ազգային մատենադարանում:

14-18-րդ դարերում պատմական Արցախը ընկնում է վայրագ նվաճողների ծանր լծի տակ: Քաղաքական այդ ծանր պայմաններում արցախահայերը կյանքի գնով պահպանել ու զարգացրել են իրենց դարավոր մշակույթը, պահպանել կենսահաստատությունը մինչեւ 19-րդ դարը:

Այսպիսով, 5-18-րդ դարերում այդ ժամանակահատվածի հոգեւոր մշակութային, լուսավորության վերելքը, հայեցի կրթություն տվող դպրոցների հիմնումը, արվեստների, արհեստների, առեւտրի զարգացումը, հանդիսացան այն ընդհանուր աղբյուրը, որն իր ներգործությունն ունեցավ 19-րդ դարում արցախական աշխարհում ծավալված մշակութային, լուսավորական տեղաշարժերի վրա:

19-րդ դարի առաջին կեսը, ինչպես բնութագրում է Մ. Սանթրոսյանը «Արեւելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին» աշխատությունում, համարվում է արեւելահայ, այդ թվում Արցախի համար մշակութային նոր

ուղղությունների ծեւավորման շրջան: Այսպես, գնալով ընդլայնվում է նոր տիպի դպրոցների ցանցը: Արխիվային տվյալները վկայում են, որ 1800-1820 թվականներին դպրոցներ են բացվում Գանձասարում, երից Մանկաց վանքում, 1821 թվականին Մ. Թաղիադյանը Եփրեմ կաթողիկոսի հետ այցելելով Շուշի, բացում է մասնավոր դպրոց, իսկ ժամանակի հայտնի լուսավորիչ Հովսեփ Արցախեցին դպրոց է բացում ս. Հակոբի, Դադի վանքերում: Արխիվային մեկ այլ փաստաթուղթ վկայում է, որ 1827թվականին Արցախի դպրոցական կյանքում սկսվում է մի նոր տեղաշարժ. Շվեյցարիայի Բազել քաղաքի միսիոներները գալով Շուշի, հիմնում են ուսումնարան, ուր սովորում են 130 աշակերտ, դասավանդում՝ 5-6 ուսուցիչ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արցախի դպրոցական համակարգում որոշակի փոփոխություն է կատարվում, հատկապես 1836 թվականին մարտի 11-ին կառավարության կողմից հայկական դպրոցների վերաբերյալ առաջին պաշտոնական կանոնադրության ընդունումից հետո (պատմության մեջ հայտնի «Պոլոժենիե» անվամբ): Այդ կանոնադրության համաձայն Արցախի հոգեւոր մշակութային կենտրոն Շուշի քաղաքում 1838 թվականի հունիսի 22-ին բացվում է Ղարաբաղի հայոց հոգեւոր թեմական դպրոցը՝ արցախահայ մշակույթի նշանավոր օջախը: Բացի թեմական դպրոցից Շուշի քաղաքում գործում էր 1830 թվականից բացված ռուսական տիպի գավառային ուսումնարանը, 1837 թվականին՝ Բաղդասար միտրոպոլիտ Հասան Ջալալյանի հիմնած հոգեւոր ուսումնարանը, իսկ թեմի գավառներում 30-ից ավելի դպրոցներ:

Ալ. Երիցյանի «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան դպրոցի» աշխատությունում մատնանշվում է, որ 19-ր դարի առաջին կեսին Արցախի թեմում գործել են 30-ից ավելի հայկական դպրոցներ:

19-րդ դարի երկրորդ կեսին՝ Արցախի դպրոցի պատմության զարգացման նոր շրջանում ընդլայնվում է նոր տիպի դպրոցների ցանցը, արմատապես վերակառուցվում կրթության բովանդակությունը, կիրառվում են ուսուցման առաջավոր մեթոդներ ու ծեւեր, ամենակարեւորը, որ դպրոցներում մանկավարժական բեղմնավոր գործունեություն են ծավալում արդեն պրակտիկայում հայտնի անվանի մանկավարժներ Պ. Շանշյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Խ. Ստեփանեն, Ս. Մանդինյանը, Մ. Աբեղյանը, Լ. Սարգսյանը եւ ուրիշներ:

Ուշագրավ է հատկապես Պետրոս Շանշյանի, Պերճ Պռոշյանի, Մարիամ Հախումյանի գործունեությունը Շուշիի բարեկարգ օրիորդաց դպրոցի հիմնադրման գործում (1864թ.): Ի դեպ նշենք, որ դարի երկրորդ կեսին Ղարաբաղի առաջին օրիորդաց դպրոցը հիմնել է տիկին Եղիսաբեթ Սարգսյանցը 1867թ. Շուշիում, որի շրջանավարտներից էր Արցախի հայտնի լուսավորիչ մանկավարժ, գեղանկարչուհի Մարգարիտ Ալեքսանյանը (1838-1902):

Պաշտոնական տվյալների համաձայն, Արցախի կրթական համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում Շուշիի ռեալական ուսումնարանը (1881թ.), որն իր 40-ամյա գոյության տարիներին սերտ կապերով կապված էր թեմական եւ օրիորդաց դպրոցների, ինչպես նաեւ հայ լուսավորչական մյուս թեմերի՝ (Երեւանի, Նոր Նախիջեւանի, Աստրախանի, Վրաստանի, Բաքվի (Շեմախի-Դերբենդի) ուսումնական հաստատությունների, Մոսկվայի Լազարյան ճեմարանի հետ: Ինչպես թեմական դպրոցը, այնպես էլ Շուշիի ռեալական ուսումնարանը պատրաստել են բավական թվով ուսուցիչներ հայկական դպրոցների համար եւ նրա շրջանավարտներից շատերը, բարձրագույն կրթություն ստանալով Ռուսաստանի և եվրոպական համալսարաններում, դարձան ականավոր հայագետներ, մանկավարժներ, բժիշկներ, ճարտարագետներ, արվեստագետներ, գրողներ, գիտության այլ բնագավառների որակյալ մասնագետներ՝ Լեւոն Աթաբեկյան, Արտեմ Ադամյան, Լեւոն Վարդունի, Արսեն Տերտերյան, Միքայել Արուտչյան, Առաքել Բահաթրյան, Արշակ Հակոբյան, Արշավիր Քամալյան, Աշոտ Հովհաննիսյան եւ շատ ուրիշներ: Այդ երկու ուսումնական հաստատությունները կարեւոր դեր խաղացին արցախահայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

Արցախահայ դպրոցի պատմության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ ժամանակահատվածում թեմի հայկական դպրոցների հիմնական տիպերն էին ծխական, հոգեւոր, եկեղեցական-ծխական, իգական, թեմական դպրոցները եւ ռեալական՝ ռուսական, տիպի ուսումնարանը: Թեմական դպրոցը հաճախ կոչվում էր նաեւ դպրանոց, հոգեւոր սեմինարիա: Ունենալով համեմատաբար երկար կյանք, թեմական դպրոցը ժամանակի ընթացքում աստիճանաբար զարգացել է եւ դարձել կրթական շարժմանը գործնական ուղղություն տվող կենտրոն: մեր դպրոցական կյանքի մեջ ներդրվող նորամուծությունները հիմնականում ծնունդ էին առնում, փորձվում ու տարածվում էին այս դպրոցից:

Ժողովրդին լուսավորելու ձգտումը ստիպեց հայ գործիչներին աստիճանաբար դպրոցները մոտեցնել այն վայրերին, ուր ապրում էր ժողովրդի հիմնական զանգվածը, այսինքն, դպրոցական ցանցը ընդլայնվում է նաեւ Վարանդայի, Դիզակի, Խաչենի, Զրաբերդի եւ Արցախի թեմի մեջ մտնող մյուս գավառներում: Եվ պետք է ասել, որ նույնիսկ ցարիզմի ազգահալած, լուսավորական-դպրոցական հետադիմական քաղաքականության անբարենպաստ պայմաններում (որի ազդեցությամբ 1896-1905թթ. փակվել են հայկական դպրոցները) անգամ, Արցախի թեմում կառավարությունից գաղտնի գործել են հայկական դպրոցներ: Ռուս հայտնի քաղաքական գործիչ Յուրի Վեսելովսկին գրել է. «Որքան տանջալի ու ցավալի էր գիտակցել, որ ռուս ժողովուրդը կարծես թե պատասխանատու է այն ամենի համար, ինչ նրա

անունով կատարվում էր Ռուսաստանի ծայրամասերում: Ինքնակալական ռեժիմը մեկ անգամ չէ, որ կեղծավորաբար քողարկվում էր նրա շահերով, արշավի ելնելով ուրիշների կուլտուրայի դեմ: Բայց միշտ էլ ուզում էիր հավատալ, որ ռուս ժողովուրդը այստեղ մեղք չունի, որ նրա անունով ինքնակոչ կերպով խոսում էին ազատության ճնշողներն ու թշնամիները»:

19-րդ դարի վերջին հայերի կրթական գործի դեմ սկսած ցարիզմի լայն հալածանքի, ստոր քաղաքականության հանդեպ գնալով ծավալվում են դժգոհություններ, ամենուրեք տարերային հավաքներ ու ժողովներ էին կազմակերպվում պայքարի ելնելու համար: Կազմակերպում էին ցույցեր՝ արեւելահայ, ռուսահայ համայնքներում, հանուն ազգային իրավունքների պահպանման, ազգի գոյապահպանման լուսավոր օջախների վերաբացման: Ծավալվող հասարակական-քաղաքական շարժումներն իրենց ազդեցությունն ունեցան ցարական կառավարության քաղաքականության վրա եւ տվեցին դրական արդյունք: Այսպես, Նիկոլայ 2-րդի հրամանով վերանայվում է կովկասյան իշխանության (Գոլիցինյան ռեժիմի) վարած սխալ ու հալածական քաղաքականությունը հայկական դպրոցների եւ առհասարակ, հայ ժողովրդի նկատմամբ: Այդ գործում մեծ դերակատարություն ունի հայերի կողմից հարգված բարոն Նոլդեն, որը ցարին ներկայացրած իր զեկուցագրում դրականորեն է արտահայտվում հայկական դպրոցների մասին, ներողամտորեն արդարացնում էջմիածնի դիմադրությունը եւ հայկական ընդվզումը, բացատրում այն գոլիցինյան դաժան ռեժիմով եւ 1903 թվականի հուլիսի 12-ի օրենքով, որն իրեն չի արդարացրել: 1905 թվականի օգոստոսի 1-ի ցարական կառավարության հրամանագիրը սահմանում էր՝ ի փոփոխումն 1903 թվականի հուլիսի 12-ի օրենքի, հայ եկեղեցուն վերադարձնել նրան պատկանող գույքը, որ գրավվել էր գոլիցինյան ռեժիմի ժամանակ եւ իրավունք վերապահել հոգեւոր գործիչներին զբաղվելու ժողովրդին լուսավորելու գործով: Հրամանագրի 3-րդ եւ 4-րդ կետերը վերաբերում են դպրոցների վերաբացմանը էջմիածնի կաթողիկոսը հատուկ կոնդակով պատվիրում է հոգաբարձական ընտրություններ անցկացնել, ուսուցչական խմբեր կազմել եւ նախապատրաստել դպրոցների բացումը:

Այսպիսով, 19-րդ դարի 2-րդ կեսին արցախահայ նոր դպրոցի կազմավորումն ու հետագա զարգացումն, ըստ էության՝ խորապես առաջադիմական մի երեւույթ էր:

Դպրոցական գործի առաջընթացն իր ներգործությունն ունեցավ նաեւ մշակութային կյանքի մյուս ճյուղերի զարգացման վրա:

Արցախի մշակութային կյանքի մեջ շատ նշանակալից եղավ տպագրության սկզբնավորումն ու զարգացումը: Հայտնի է, որ հայկական տպագրությունը ծագելով 16-րդ դարասկզբին՝ մեծ դեր կատարեց մեսրոպյան դպրության պահպանման ու հետագա զարգացման գործում: Շատ արագ զարգացող տպագրական գործն իր ակնհայտ արժանիքներով գրավեց հայ

մշակույթի երախտավորների ուշադրությունը եւ նրանց ազգանվեր ձեռնարկումների շնորհիվ մեկը մյուսի ետեւից տպարաններ ստեղծվեցին Կ. Պոլսում, Լվովում, Հռոմում, Փարիզում, Նոր Զուղայում, ռուսահայ համայնքներում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Նոր Նախիջեւանում, արեւելահայ թեմում՝ Թիֆլիսում, Էջմիածնում, Շուշիում եւ այլուր:

Նոր դարի երկրորդ տասնամյակի վերջերին Շուշին դառնում է ինչպես արցախահայ մշակույթի այլ ճյուղերի, այնպես էլ տպագրական արվեստի կենտրոն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շվեյցարիայի Բազել քաղաքի բողոքական միսիոներները՝ Ավգուստ Դիտրիխը եւ Ֆելիցի Զարեմբան 1823 թվականին գալով Շուշի, ձեռնամուխ են լինում մի շարք լուսավորական ձեռնարկումների, բացում են դպրոցներ եւ սկիզբ դնում տպագրական գործին: Նրանք իրենց հետ բերել էին նորագույն տառեր, տպագրական սարքեր, տպագրիչ եւ շատ շուտով սկսում են հրատարակել մի քանի գրքեր-գրքույկներ: Այդ գործին ակտիվ մասնակցություն են ունենում Արցախի թեմի հայտնի լուսավորիչներ Հովսեփ Արցախեցին, Պողոս վարդապետ Ղարաբաղցին եւ Շուշիի հայ հասարակությունը: Համբավավոր գիտնական Պողոս վարդապետ Ղարաբաղցու նախաձեռնությամբ 1828թ. Շուշիում լույս է տեսնում առաջին գիրքը «Պատմություն սուրբ գրոցն», որի թարգմանությունը ռուսերենից կատարել էր մշակութային ականավոր գործիչ Հարություն Զուղայեցի Դավթյանը: Այնուհետեւ լույս է տեսնում Պ. Ղարաբաղցու «Համառոտութիւն հայկական քերականության (Շուշի 1829թ.), Հ. Արցախեցու «Համառոտ բառագիրք ի գրաբարե աշխարհաբար» գրքերը եւ այլն: Հովհաննես Ղուկասյանի վկայությամբ 1827-1836 թվականներին Շուշիի հայկական տպարանում հրատարակված գրքերի թիվը հասնում է 11679 օրինակի: Հրատարկվել են նաեւ պարսկերեն՝ 728, թուրքերեն՝ 147, եբրայերեն՝ 100 օրինակ գրքեր: Անվանի լեզվաբան Գ. Սեւակը «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» աշխատությունում պատշաճ գնահատելով միսիոներների, մշակութային գործիչների ձեռնարկումները գրատպության գործում, մատնանշում է, որ «Շուշիում աշխարհաբարով հրատարակած գրքերն իր մաքրությամբ եւ պարզությամբ գերազանց է ոչ միայն 30-ական թվականները, այլեւ մինչեւ 60-ական թվականները հրատարակած բոլոր գրքերի լեզվից»:

Արցախում գրատպության ասպարեզում հատկապես նշանակալից եղավ թեմի առաջնորդ Բաղդասար միտրոպոլիտ Հասան Զալալյանի եռանդուն գործունեությունը: Գանձասարի Հասան Զալալյանի տոհմի հոգեւոր-մշակութային գործիչ Սարգիս Զալալյանցը հիշատակում է, որ Բաղդասար միտրոպոլիտը տպագրական այս շարժման մեջ որոշակի դեր էր կատարում: Նա բավական մեծ գումար ուղարկեց Վենետիկի Մխիթարյանների միաբանության վանքը, բերել տվեց մի-մի օրինակ նրանց բոլոր հրատարակություններից եւ

կազմեց հոգեւոր դպրոցին կից մի հարուստ գրադարան՝ այնտեղ հավաքելով նաեւ Ղարաբաղի վանքերում գտնված նշանավոր գրչագիր մատյանները եւ հետզհետե տպագրել է տալիս այդ գրքերն իր Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի տեսչության տպարանում կամ ուղղակի՝ «Վիճակավոր առաջնորդին Ղարաբաղու բարձր սրբազան միտրոպոլիտի Բաղդասարի»: Ուշագրավ է նշել այն հանգամանքը, որ Բաղդասար միտրոպոլիտի շնորհիվ կանոնավորվում է տպագրական գործը, հարստանում Մոսկվայից բերված տառատեսակներով եւ տպագրական պարագաներով:

Այսպիսով, 19-րդ դարի առաջին կեսին Շուշին եղավ ոչ միայն արցախահայ տպագրության ծննդավայրը, այլեւ իսկական օրրանը. այստեղ դարի երկրորդ կեսին գործեցին նաեւ հայ տպագրիչները: Ավելին, մինչեւ 19-րդ դարի վերջը Շուշին է արցախահայ տպագիր գրքի գլխավոր մատակարարը: Այդ ժամանակամիջոցում ամենից ավելի հայերեն գրքեր տպագրվել են գրատպության բնագավառում հռչակված գործիչ Մ. Մահտեսի-Հակոբյանի բարձրակարգ տպարանում: Մահտես-Հակոբյանի ծառայությունը եղավ ոչ միայն այն, որ նա նոր կյանք հաղորդեց արցախահայ տպագրության զարգացման գործին, այլեւ այն, որ տպագրությունը հաստատեց հայաշատ այդ քաղաքում, որը դարձավ երկրամասի մշակութային օջախներից մեկը եւ լուսավորական կարեւոր դեր կատարեց Արցախի թեմում: Պարբերաբար Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս են տեսնում թերթեր, ամսագրեր («Հայկական աշխարհ», «Քնար խոսնակ», «Գործ», «Ազգագրական հանդես» եւ այլն), թարգմանական գործեր՝ մեծ մասամբ գեղարվեստական նշանավոր ստեղծագործությունները: Արցախի մամուլի հմուտ հետազոտող Ս. Ավագյանը իրավացիորեն մատնանշում է, որ 20-ական թվականների վերջերին հետզհետե նոր ծավալներ է ընդունում Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանի գործունեությունը եւ այն դառնում է Արցախի միակ բարեկարգ տպագրական օջախը: Այդ շրջանում որոշակի զարգացում է նկատվում Արցախի եւ մշակութային-լուսավորական եւ հրատարակչական կյանքում: Հրատարակված գրքերի ու պարբերականների հարատեւությունը, ինչպես եւ նրանց այնքան արժեքավոր ու իմաստալից նյութերը որոշակիորեն նպաստեցին ժողովրդական զանգվածների լուսավորմանն ու զարգացմանը:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախի մշակույթի ընդհանուր վերելքի հետ միաժամանակ զարգանում է նաեւ նրա կարեւոր ճյուղերից մեկը՝ պարբերական մամուլը:

Մամուլի սկզբնավորումը կապվում է արցախահայության ազգային ինքնագիտակցության, մշակույթի եւ հասարակական մտքի զարգացման հետ: Նրա հայտնության գործում նախապատրաստական կարեւոր նշանակություն ունեցան հայկական գաղթօջախներում արեւելահայ իրականությունում արդեն ձեւավորված ազգային պարբերական հրապարակությունների ավանդույթները,

որոնք ամենից առաջ սկիզբ են առնում հայերեն առաջին ամսագրից՝ Հ. Շմավոնյանի խմբագրությամբ Մադրասում հրատարակված «Ազդարարից» (1779-1796թթ.): «Ազդարարից» ժառանգված այդպիսի ավանդույթներից էին ազգային ինքնության պահպանության, համախմբման ու միասնության, հայ եկեղեցու եւ նոր ժամանակներում ստեղծվող հոգեւոր ու մշակութային արժեքների ներդաշնակության ու զարգացման, հայրենի բնաշխարհում ազգովին ամփոփվելու գաղափարները:

«Ազդարարից» էր սկիզբ առնում նաեւ արեւմտահայ «Տարեգրություն» (1802թ.), «Եղանակ բյուզանդյան» (1820թ.), «Արշալույս Արուրարյան» (1840թ.), արեւելահայ «Արեւելյան ծանոցմունք» (1816թ.), «Կովկաս» (1846թ.), «Արարատ» (1851թ.), «Հյուսիսափայլ» (1858թ.), «Կռունկ հայոց աշխարհի» (1860թ.) եւ այլ պարբերականներ:

Արցախահայ մամուլի սկզբնավորման համար որոշ չափով հող նախապատրաստեցին վերոբերյալ պարբերականների գործունեությունն ու փորձը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արցախահայ մամուլի զարգացման առաջին շրջանն ընդգրկում է 1870-1887-ական թվականները, երբ սկզբնավորվում են ազգային լրագրությունն ու հրապարակախոսությունը, մշակվում է Արցախի լրատվական համակարգը, որի ամենակարեւոր առանձնահատկությունն ազգային նպատակաուղղվածությունն էր:

Այս առանձնահատկությունն արդեն բավական նկատելի է Շուշիի հոգեւոր տեսչության տպարանում լույս տեսած անդրանիկ պարբերականի՝ «Հայկական աշխարհ» գրական, մանկավարժական, ապա նաեւ կրոնական ամսագրի (1874-1876թթ.) էջերում: Ամսագրի տերն ու տնօրենը եվրոպական համալսարաններում մանկավարժական եւ իրավաբանական կրթություն ստացած Խորեն Ստեփանեն էր: 1868թ. նրան հրավիրում են Արցախ՝ թեմական դպրոցում ռուսաց լեզու դասավանդելու: Բազմավաստակ պատմաբան Լեոն իրավացիորեն մատնանշում է, որ Խորեն Ստեփանեն մի շարք նախաձեռնությունների հեղինակ էր՝ հիմնում է բարեգործական ընկերություն, գրադարան-ընթերցարան, դպրոցներ, նաեւ հանձն առավ Շուշիում հրատարակելու հայկական առաջին պարբերականը: Պարբերականի երկու տարիների համարներում տպագրվում են լուսավորության, դպրոցի ներքին կյանքին առնչվող մանկավարժական բազմաբնույթ հոդվածներ:

Առաջ է քաշվում գիտության տվյալները ժողովրդի բարօրությանը ծառայեցնելու հարցը, կոչ է արվում բարձրացնելու գիտության մշակների հեղինակությունը:

Լինելով առաջին մանկավարժական օրգանը Արցախում, «Հայկական աշխարհ»-ն իր կարճատեւ գործունեության ընթացքում կարողացավ բավական կատարելագործվել, վերացական-խրատական ոգին փոխարինել դպրոցներին հուզող կոնկրետ խնդիրներով:

1880-ական թվականներին աննախընթաց լայն իրազեկությամբ, հասարակական կյանքի, մշակույթի, աշխարհաբարի, դպրոցի ու մանկավարժության, նոր գրականության վերաբերյալ իր հրատապ ու հարուստ հրապարակումներով առանձնացնում է Շուշիի Մ. Սահատես-Հակոբյանի տպարարնում 1887 թվականին տպագրված Նիկողայոս տեր Ավետիքյանի «Քնար խոսնակը», Սիմոն Հախումյանի «Գործ» (1882-1884թթ.) գրական, քաղաքական եւ ազգային հանդես պարբերականները: Նրանց էջերում հրատարակվող նյութերը բազմաժանր էին. ինֆորմացիաների, թղթակցությունների, նամակների կողքին զետեղվում էին բանաստեղծություններ, արձակ գործեր, առակներ, մանկավարժական, հասարակական-քաղաքական բնույթի հոդվածներ, ուր խոսվում էր ուսուցիչների մանկավարժական պատրաստվածության, վարպետության, աշակերտների մեջ դեպի կրթությունը, ուսումը սեր պատրաստելու, ժողովրդական լայն զանգվածների լուսավորության եւ մշակութային կյանքին առնչվող այլ հրատապ հարցերի մասին: Առաջ էր քաշվում նաեւ ռուս եւ եվրոպական առաջավոր արվեստին եւ գրականությանը հաղորդակից լինելու անհրաժեշտությունը:

Նշված տասնամյակում Շուշիում հրատարակվող պարբերական մամուլում առավել խորանում են հայ երկու խոշոր հատվածների հոգեւոր ու մշակութային կապերը, հարուստ նյութ է պարունակվում հայ հասարակական կյանքի, գրականության, գիտության ու արվեստի վերաբերյալ:

Պարբերական մամուլին աշխատակցում էին տաղանդավոր հրապարակախոսներ, լրագրողներ, գրողներ, մանկավարժներ, արվեստի նշանավոր գործիչներ, որպիսիք էին՝ Գրիգոր Արծրունին, Համբարձում Առաքելյանը, Ալեքսանդր Քալանթարը, Հակոբ Խոջամիրյանը, Միսաք Առուստամյանը եւ ուրիշներ, որոնք իրենց բազմաբնույթ հոդվածներում լուրջ եւ հասարակայնորեն ազդեցիկ խոսք են ասել ազգային կյանքի համար այնպիսի կարեւոր հիմնախնդիրների մասին, ինչպիսիք են հայ իրականության մեջ եկեղեցու եւ հոգեւորականության դերի, մշակութային կրթօջախների բարեկորոգումների, ժողովրդի լուսավորության գործի, երկրամասի մշակույթի ամենատաբեր ճյուղերի զարգացման մասին:

Արցախահայ պարբերական մամուլի զարգացման հաջորդ փուլում՝ 19-րդ դարի 90-ական թվականներին, Շուշիում լույս է տեսնում ականավոր բանասեր, ազգագրագետ Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդես»-ը (1896-1897թթ.):

Հանդեսը մշակութային կյանքին առնչվող բազմաբովանդակ հարցերից, սոցիալականից բացի ստանում է նաեւ քաղաքական իմաստավորում նաեւ այն տեսակետից, որ ակտիվորեն քննարկում է ցարական կառավարության քաղաքականությունը ժողովրդական լուսավորության ասպարեզում, որն ավելի ծանր դրսեւորումներ էր ստացել, (ազգային ծայրամասերում խիստ ուժեղացավ ազգային ճնշումը մշակույթի ասպարեզում, մայրենի լեզուներով

հրատարակությունների արգելումը, ազգային մշակույթի գործիչների հալածանքը զուգակցվում էին բռնի ռուսացմամբ, ուղղափառության ստիպողական տարածմամբ, ազգահալած քաղաքականության իրագործմամբ):

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում արցախահայ մամուլի լրատվության սահմանների այդպիսի ընդարձակումը վկայում էր նրա ընթերցողների հետաքրքրության նոր միտումների մասին, փաստում, որ հայ ժողովրդի այդ հատվածում ձեւավորվում է լրատվության ազգային բովանդակությունը եւ նրանում, որ արցախահայ մամուլը կայացել է:

19-րդ դարի երկրորդ կեսին Արցախում դպրոցական համակարգի զարգացումը, գրատպության, պարբերական մամուլի բնագավառներում ձեռք բերված նվաճումներն իրենց ազդեցությունն ունեցան նաեւ մշակութային կյանքի մյուս բնագավառների՝ գիտության, գրականության, թատերական արվեստի, երաժշտության, կերպարվեստի եւ այլ ուղղությունների զարգացման վրա:

Վերոնշյալ համառոտ շարադրանքից կարելի է եզրակացնել, որ քննարկվող ժամանակաշրջանում Արցախի մշակութային կյանքում նկատվող առաջընթացն իր ներդրումն ունեցավ արեւելահայ մշակույթի ընդհանուր վերելքի գործում՝ այն հարստացնելով իր ուրույն գույներով: Անշուշտ, պատմական Արցախն իր ինքնատիպ մշակույթով, հայ ժողովրդի ամբողջական մշակույթի անբաժանելի մասն է, որին տեղական երանգավորմամբ հատուկ են նույն օրինաչափությունները եւ ընդհանուր ազգային առանձնահատկությունները:

Ահա թե ինչու հիմնահարցն ամբողջական ուսումնասիրության անհրաժեշտություն ունի, սակայն հնարավոր չէ սույն ամսագրային հոդվածում տալ բոլոր հարցերի գիտական սպառիչ պատասխանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղվանից աշխարհի, Թիֆլիս, 1913թ., գլուխ 27, էջ 26:
2. Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում, Երեւան, էջ 61:
3. ՀՅ ԱԱ, Ֆ. 9, Գ. 19, Ֆ. 56, Գ. 78, թ. 14:
4. Պ. Պռոշյան, Ղարաբաղի տիրամայր ս. Մարիամի օրհորդաց ուսումնարանի բացվելը, Շուշի, 1864թ. էջ 12:
5. "Вестник воспитания", 1905г., № 9, стр. 134, смотри также, "Армянский вестник", 1917г., № 14, стр. 5.
6. Հ. Ղուկասյանց, Բողոքականությունը Կովկասու հայոց մեջ, Թիֆլիս, 1886թ., էջ 3-4:
7. Նշված գիրքը, էջ 8-10:
8. Գ. Սեւակ, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երեւան, 1955թ., էջ 60-61:
9. Սարգիս Ջալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858թ., էջ 354-355:
10. Ս. Ավագյան, Ղարաբաղի մամուլի պատմությունը, Երեւան, 1989թ., էջ 71:
11. Մ. Մխիթարյան, Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը, Երեւան, 2002թ., էջ 15-16:
12. «Ազգագրական հանդես», Շուշի, 1896թ., Ա գիրք, 1897թ., Բ գիրք: